

Դասընթացի անվանումը՝	«Վաշխառության հանցակազմը և փոխառության պայմանագիրը»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է ընդհանուր իրավասության դատարանների, վերաքննիչ քրեական դատարանի, վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացն անդրադառնում է վաշխառության հանցակազմի վերլուծությանը և փոխառության պայմանագրի քննարկմանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Վաշխառության հանցակազմի վերլուծությունը:
- Վաշխառության հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումները.
 - ա/ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազան- ցող չափով տոկոսներ ստանալը,
 - բ/ անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը:
- Փոխառության պայմանագրի վերլուծությունը:
- Վաշխառության հանցակազմի առանձնահատկությունները:

Դասընթացը վարում են ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորները: